տուիրելով եղբայրական և քրիստոնէական սիրով վարիլ ընդ օտարազգի քրիստոնեայս, որում արժանավայել յարգանօք գրեալ էին պատասխան։ Այս լուր կործանման չեւ էր հասեալ 'ի Կոստանդինուպօլիս, և գլխաւորք ազգին ջանային, այլ ոչ կարէին մերձենալ առ Նախարարս Տէրութեան. զի ժամանակ խռովութեան և պատերազմաց էր, եւ մանաւանդ հասեալ վախճան կենաց Մահմուտայ Արքայի՝ մարմին նորա կայր անթաղ 'ի տան, որոյ վասն գրէ Փոխանորդն համբերել սակաւ ինչ, զի չէր հնար 'ի վերայ սգոյ առարկայ խնճոյից բանալ։ Եւ ապա 'ի 28 Հոկտեմբերի արարին մասնաւոր ժողով, թէ վասն Համբարձման եւ թէ վասն խնդրոյ Ասորւոց, եւ որոշեցին Միքայէլ, ճէզայիրցի Մկրտիչ՝ եւ Կելկելեան Յարութիւն Ամիրայք խորհիլ 'ի միասին և խնդրել յարքունի Դիւանէ զպատճէն հրովարտակին՝ զոր ընկալեալ էին Լատինք, եթէ գտցեն 'ի նմա օգտաւէտ բանս ինչ, մատիցեն առ Նախարարս եւ առ ոմանս արքունեաց, որք կարողք են առնել որպէս և կամին. այլ 'ի հասանիլ Նամակաց յԵրուսաղէմ լռեալ դադարեցին 'ի գործոյ։

Ինքնակալն Օսմանեան Պէտութեան Սուլթան Ապտիւլ Մէճիտ Խան արար մեծահանդէս ժողով 'ի պալատն Թօփ Գարու 'ի Կիւլհանէ ասացեալ տեղին, ուր ինքն մեծազօր Արքայն 'ի վերին դատիկոնի հանդէպ լուսամտի բազմեալ 'ի գահոյս երեւեցաւ առաջի խուռն բազմութեան, ուր էին Սատրազամն և բոլոր Նախարարք Տէրութեան և Փաշայք հանդերձ զօրականօք, Շէյխ իւլիսլամն դասուք գիտնականաց, Գլխաւորք արհեստաւորաց, Դեսպանք Տէրութեանց, Պատրիարքունք քրիստոնեայ ազգաց, ընդ որս եւ Խախամագլուխն Հրէից, թող զայլ հասարակ ժողովուրդս. յաշխարհաժողով հանդիսի աստ արտաքին գործոց պաշտօնեայն ընթերցաւ 'ի լուր ամենեցուն զկայսերական հրովարտակն (Խաթթի Հիւմայուն Հոկտեմբեր)։

Ասասցուք կարճ 'ի կարճոյ վասն Եգիպտոսի. զի 'ի ըսկզբանէ անտի հոգեւոր տեսչութիւն Հայ ժողովրդոց երկրին այնորիկ վիճակեալ էր Երուսաղէմի, որպէս յայտ առնէ զայս հրովարտակն Մարտիրոս Պատրիարքի՝ տուեալ 'ի Սուլթանաց Եգիպտոսի և զայլ և այլ պարագայս գոր-